ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արևշատ համայնք, Մուրացան 43,
Հեռ.6-52-34 arevshat.gp@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N-17Ա
«---29---» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆ

## ԱՐԵՎՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշում է՝

Հաստատել Արևշատ գյուղական համայնքի 2014 թ-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական շինության/ տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար

1/ մինչև 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար -20000 դրամ

2/ սույն կետի <<1>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա/201-ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -20000 դրամ

բ/501-ից մինչև 1000քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -25000դրամ

գ/1001-ից և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -25000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3/ մինչև 20քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -3000 դրամ

4/20 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -5000 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի /համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտս չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործարարական նշանակության փոփոխության -1000 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվում է – 1000 դրամ

4. համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից խմիչքների թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար -5000 դրամ

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար -5000 դրամ

5. Համայնքի տարածքում

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է օրվա համար -350 դրամ

6. 6.Համայնքի տարածքում առևտրի օբյեկտներին ժամը 24.00- ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է -20000 դրամ

Սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ կետով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է -1500 դրամ
2. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակցության վճար սահմանել -2000 դրամ

3.Համայնքի տարածքում աղբահանության վճար սահմանել 0 դրամ:

Արշամ Ղարիբյան

Արմեն Վարդանյան

Արա Աթանեսյան

Գարիկ Կոստանյան

Վահան Հարությունյան

Վաղարշակ Հովհաննիսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արևշատ համայնք, Մուրացան 43,
Հեռ.6-52-34 arevshat.gp@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N-18Ա

«---29---» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆ

### ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ:

ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 16-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐՈՎ:

Ժամանակավորապես դեկտեմբերի 1-ից ձմռան ամիսներին փակել մանկապարտեզը երեխաների քանակի նվազեցման պատճառով:

Ավագանի՝

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Արշամ Ղարիբյան

Արմեն Վարդանյան

Արա Աթանեսյան

Գարիկ Կոստանյան

Վահան Հարությունյան

Վաղարշակ Հովհաննիսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈԳՈԼ ՆԻԿՈՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արևշատ համայնք, Մուրացան 43,
Հեռ.6-52-34 arevshat.gp@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 19- Ն

«--29---Նոյեմբերի 2013 ԹՎԱԿԱՆ

## ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 16-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԴՐՈՒՅԹՆԵՐՈՎ:**
**Ելնելով անհրաժեշտությունից կատարել հետևյալ փոփոխությունները;**

1.Հիմք ընդունելով ՀՀԿառավարության 2013թվականի հուլիսի 18-ի թիվ 781-Ն որոշման 7-րդ կետը ավելացնել վարչական բյուջեի եկամուտները<<Ընթացիկ սուբվենցիաներ>>համայնքներին հոդվածով /900415154260/ գանձապետական եկամտային հաշվի վրա 60.0հազ.դրամով;

2.Ավելացնել վարչական բյուջեի եկամուտները ինքնակամ շենքերի օրինականացման վճարներ/900415154252/գանձապետական եկամտային հաշվի վրա 20.0հազ.դրամ և ավելացնել 09.05.01.51/Արտադպ.դաստիար./ գործառնական դասակարգման 4239 հոդվածի վրա աշխատավարձ տալու նպատակով;

3. Ավելացնել վարչական բյուջեի եկամուտները հիմն.օբյեկտների շինությունների թույլտվության համար/900415154203/ գանձապետական եկամտային հաշվի վրա 80.0 հազ.դրամ և ավելացնել 09.05.01.51/Արտադպ.դաստիար./ գործառնական դասակարգման 4239 հոդվածի վրա աշխատավարձ տալու նպատակով;

1.Վարչական բյուջեի ծախսային մասում նախատեսել կառ.ապ. 01.01.01.51 գործառնական դասակարգման 4212 հոդվածով 60.0 հազ.դրամ էլ.էներգիայի համար;
2.կառ.ապ. 01.01.01.51 գործառնական դասակարգման 4111 հոդվածից 170.0 հազ.դրամ պակասեցնել և ավելացնել 4112 հոդվածի վրա խրախուսում տալու նպատակով;

3. կառ.ապ. 01.01.01.51 գործառնական դասակարգման 4234 հոդվածից 37.0 հազ.դրամ և 4212 հոդվածից 90.0 հազ.էլ.էներգիայից պակասեցնել և ավելացնել 09.05.01.51/Արտադպ.դաստիար./ գործառնական դասակարգման 4239 հոդվածի վրա աշխատավարձ տալու նպատակով;

4.Թատերական ներկայացում /08.02.05.52/ գործառնական դասակարգման 4239 հոդվածից 55.0հազ.դրամ պակասեցնել և ավելացնել 09.05.01.51/Արտադպ.դաստիար./ գործառնական դասակարգման 4239 հոդվածի վրա աշխատավարձ տալու նպատակով;

5.Կենսաբազմազ.և բնութ.պաշտպան./05.02.01.51/ գործառնական դասակարգման 4239 հոդվածից 100.0հազ.դրամ պակասեցնել և ավելացնել 09.05.01.51/Արտադպ.դաստիար./ գործառնական դասակարգման 4239 հոդվածի վրա աշխատավարձ տալու նպատակով;
6.Փողոցների պահպանում և շահագործում /04.05.01.59/ գործառնական դասակարգման 4251 հոդվածից 100.0հազ.դրամ պակասեցնել և ավելացնել 09.05.01.51/Արտադպ.դաստիար./ գործառնական դասակարգման 4239 հոդվածի վրա աշխատավարձ տալու նպատակով;
7.Հասարակ.կազմակ.աջակց./10.07.01.55/ գործառնական դասակարգման 4819 հոդվածից 20.0 հազ.դրամ պակասեցնել և ավելացնել 09.05.01.51/Արտադպ.դաստիար./ գործառնական դասակարգման 4239 հոդվածի վրա աշխատավարձ տալու նպատակով;
8.Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից/11.01.02.51/ գործառնական դասակարգման 4891 հոդվածից 50.6 հազ.դրամ պակասեցնել և ավելացնել 09.05.01.51/Արտադպ.դաստիար./ գործառնական դասակարգման 4239 հոդվածի վրա աշխատավարձ տալու նպատակով;
9. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից/11.01.02.51/ գործառնական դասակարգման 4891 հոդվածից 120.0 հազ.դրամ պակասեցնել և ավելացնել Սոց.անապահ.անձ.աջակցություն /10.07.01.54/գործառնական դասակարգման հողարկավորության նպաստ 4726 հոդվածի վրա թաղման գումար տալու նպատակով;

Ավագանի՝

Կողմ /6/ | Դեմ /0/ | Ձեռնպահ /0/

ԱՐՇԱՄ ՂԱՐԻԲՅԱՆ

ՎԱՀԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԱՐԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՎԱՂԱՐՇԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐԱ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈԳՈԼ ՆԻԿՈՅԱՆ